2021

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 3

ԳՅՈՒՏԵՐ 5

ՀԱՅՏԵՐ 5

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ 10

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ 12

ՀԱՅՏԵՐ 12

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ 13

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 14

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ 18

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄՆԵՐ 20

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ 21

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 21

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 21

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ 22

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 23

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 25

Հրատարակվում է Մտավոր սեփականության գրասենյակի կողմից

Խմբագրական կոլեգիա՝

Քրիստինե Համբարյան

Սուսաննա Դավթյան

Արփինե Եգանյան

0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

Հեռ. 011 597 534 հայտերի ընդունման բաժին

Հեռ. 011 597535 տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովման և հրապարակումների բաժին

Internet: www.aipo.am

ՆԱԽԱԲԱՆ

2021 թվականը Մտավոր սեփականության գրասենյակի համար դարձավ մի շարք փոփոխությունների տարի.

2021 թվականին.

հուլիսի 1-ից ուժի մեջ են մտել երկու նոր օրենքներ, մասնավորապես՝ «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքը և «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենքը.

ՀՀ Կառավարություն է ներկայացվել.

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը:

«Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը.

նոր օրենքներից բխող թվով 11 նոր ենթաօրենսդրական ակտերի նախագծեր:

Հաշվետու տարում Գրասենյակը կատարելագործել է մատուցվող ծառայությունների որակը, անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը ավելի հասանելի և մատչելի դարձնելով և մտավոր սեփականության ազգային համակարգն ավելի մոտեցնելով միջազգային առաջատար համակարգերին:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է մտավոր սեփականության գրասենյակի նոր կայքէջը, որը ներկայում շահագործման փուլում է:

Չնայած համավարակով և այլ իրավիճակներով պայմանավորված խոչընդոտներին, 2021 թվականին ներկայացված ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակի զգալի աճ է գրանցվել նախորդ տարիների համեմատությամբ:

ՆԱԽԱԲԱՆ

Էականորեն ավելացել են էլեկտրոնային տարբերակով ներկայացվող արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերի քանակը: Շարունակում է իրականացվել մտավոր սեփականության օբյեկտների գրանցման հայտերի և դրանց ամբողջ գործավարությանը վերաբերող փաստաթղթերի թվայնացումը:

2021 թվականին Գրասենյակն ընդլայնել է համագործակցությունը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO), Եվրասիական արտոնագրային կազմակերպության (EAPO), Եվրոպական Միության մտավոր սեփականության գրասենյակի (EUIPO) և օտարերկրյա պետությունների գերատեսչությունների հետ, մասնակցել է ոլորտում կազմակերպված միջազգային վեհաժողովների, նիստերի, աշխատաժողովների, սեմինարների, աշխատանքային հանդիպումների:

ՀՀ վարչապետի 2021թ.-ի հուլիսի 26-ի N 786-Լ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի կանոնադրությունը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը անվանափոխվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի: Միաժամանակ բաժինների միջև վերաբաշխվել են Գրասենյակի կանոնադրությամբ նախատեսված գործառույթները:

Գրասենյակի կազմում ստեղծվել է նոր կազմակերպաիրավական բաժին:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Մտավոր սեփականության գրասենյակը Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմում գործող առանձնացված ստորաբաժանում է, որն օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ մտավոր սեփականության բնագավառում:

Գրասենյակը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գյուտերի, արդյունաբերական դիզայնների, ապրանքային և սպասարկման նշանների, աշխարհագրական նմուշների, ապրանքների ծագման տեղանունների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի ընդունումն ու փորձաքննության անցկացումը, պետական գրանցումը, արտոնագրերի և վկայագրերի հանձնումն ու սահմանված կարգով նշված օբյեկտների պետական գրանցամատյանների վարումը, ինչպես նաև դրանց օգտագործման իրավունքի ընձեռման՝ ֆրանչայզինգի, լիցենզային պայմանագրերի, այդ թվում՝ բաց լիցենզիաների և իրավունքների փոխանցման գրանցումը:

Գրասենյակն իրականացնում է արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հայտերի փորձաքննության որոշումներին վերաբերող և արտոնագիր կամ վկայագիր տալու դեմ առարկությունների ու բողոքների քննարկումը:

Իրավական պահպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների մասին պաշտոնական տեղեկությունները Գրասենյակը նախապատրաստում և հրապարակում է իր կայքէջում:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան Գրասենյակը համագործակցում է նմանատիպ

գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ և կատարում է միջազգային պայմանագրերով ստանձնած իր պարտավորությունները:

Գրասենյակի կազմում գործում են հետևյալ բաժինները.

Քրիստինե Համբարյան
Գրասենյակի ղեկավար

Շուշիկ Մխիթարյան
Գրասենյակի ղեկավարի տեղակալ



Գյուտերի և արդյունաբերական դիզայնների փորձաքննության բաժին
Ավետիս Պերյան

Ապրանքային նշանների և աշխարհագրական նշումների փորձաքննության բաժին
Լուսինե Մանուկյան

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բաժին
Արմենուհի Շահինյան

Տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովման և հրապարակումների բաժին
Արփինե Եգանյան

Հայտերի ընդունման բաժին
Սուսաննա Դավթյան

Պետական գրանցամատյանների բաժին
Արա Աբգարյան

ԳՅՈՒՏԵՐ

ՀԱՅՏԵՐ

2021 թվականին Մտավոր սեփականության գրասենյակ է ներկայացվել 48 գյուտի արտոնագիր ստանալու հայտ, 48 գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտ և 13 օգտակար մոդելի հայտ, որոնցից 100-ը՝ ազգային, 9-ը՝ օտարերկրյա հայտատուներից (Շվեյցարիա, Ռուսաստանի Դաշնություն և Իսրայել)։

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 32 հայտ (հայտերի ընդհանուր քանակի 29, 35%-ը)։

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



	2017	2018	2019	2020	2021
Ազգային հայտատուներ	146	135	149	87	100
Օտարերկրյա հայտատուներ	4	6	4	12	9
Ընդամենը	150	141	153	99	109

ԳՅՈՒՏԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայտատու	Հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
Ֆիզիկական անձ	68	62,39%
Իրավաբանական անձ	41	37,61%
Ընդամենը	**109**	**100%**

2021 թվականին Մտավոր սեփականության գրասենյակ է ներկայացվել 2 եվրասիական հայտ, ստուգվել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին, և արդյունքում սահմանվել է եվրասիական հայտի ներկայացման թվականը: Այդ թվականից հաշված մեկամսյա ժամկետում Գրասենյակը դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2021 թվականների ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն է առաքվել գյուտի 57 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 92 հայտով, ընդ որում՝ 21 հայտով կայացվել է գյուտի արտոնագիր տալու մասին որոշում, 39 հայտով կայացվել է գյուտի կարճաժամկետ արտոնագիր տալու մասին որոշում, 5 հայտով՝ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին որոշում, 26 հայտով՝ հայտը հետ կանչված համարելու մասին որոշում, 1 հայտով կայացվել է օգտակար մոդելի արտոնագիր տրամադրելն ամբողջությամբ մերժելու մասին որոշում, 3 հայտով կայացվել է գյուտի արտոնագիր ստանալու հայտի հրապարակման մասին որոշում:

Կայացվել է նաև 2 գյուտի արտոնագրով՝ արտոնագրաունակության մասին եզրակացության հրապարակման մասին որոշում:

ԳՅՈՒՏԵՐ

ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԴԻԱԳՐԱՄԻ ՏԵՍՔՈՎ



2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԳՐԱՖԻԿԻ ՏԵՍՔՈՎ



2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	Ներկայացված հայտերի քանակը	%-ը ընդհանուր թվի մեջ
1.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	17	15,59%

2.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	16	14,67%
3.	Չափում և օպտիկա (G01-G03)	12	11.0%
4.	Օրգանական քիմիա (C07, A01N)	9	8,25%
5.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47)	6	5,5%
6.	Ներկեր, վառելիք, կենդանական և բուսական յուղեր (C09-C11)	5	4,58%
7-24.	Այլ բնագավառներ	44	40,46%
	Ընդամենը	**109**	**100**

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԵՆ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

No	Տեխնիկայի բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	2019	2020	2021	Ընդհանուր թիվը (2019- 2021)	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Դեղեր և դեղամիջոցներ (A61K)	22	15	17	54	14,95%
2.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացառությամբ A61K)	13	15	16	44	12,19%
3.	Չափում և օպտիկա (G01-G03)	10	8	12	30	8,31%

4.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	14	10	4	28	7,76%
5.	Օրգանական քիմիա (C07, A01N)	8	7	9	24	6,65%
6.	Հագուստ և կենցաղային առարկաներ (A41-A47)	3	11	6	20	5,54%
7.	Սննդամթերք և ծխախոտ (A21-A24)	14	1	4	19	5,26%
8.	Անօրգանական քիմիա (C01-C05, C30)	9	5	4	18	4,99%
9.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	7	5	4	16	4,43%
10	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32)	8	3	3	14	3,88%
11.	Շինարարություն (E01-E06)	4	4	2	10	2,77%
12-13.	Ներկեր, վառելիք, կենդանական և բուսական յուղեր (C09-C11)	2	2	5	9	2,49%
12-13.	Գյուղատնտեսություն (A01, բացառությամբ A01N)	3	2	4	9	2,49%

14.	Տրանսպորտ (B60-B68)	5	0	3	8	2.22%
15.	Այլ բնագավառներ	30	11	16	57	15,79%
	Ընդամենը	153	99	109	361	100%

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2021 թվականին տրվել է 27 գյուտի արտոնագիր, 39 գյուտի կարճաժամկետ արտոնագիր և 7 օգտակար մոդելի արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է 3 գյուտի արտոնագիր (Իսպանիա, Շվեյցարիա և Ռուսաստանի Դաշնություն) և 1 գյուտի կարճաժամկետ արտոնագիր (Իսրայել):

ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



	1	2	3	4	5
Գյուտի արտոնագիր	74	100	100	72	27
Օգտակար մոդելի արտոնագիր	27	35	32	29	7
Գյուտի կարճաժամկետ արտոնագիր					39
Ընդամենը	101	135	132	101	73

2021 թվականին «Արտոնագրերի մասին» օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով գյուտի կարճաժամկետ արտոնագրերի են փոխակերպվել 40 գյուտի արտոնագրեր:

ԳՅՈՒՏԵՐ

2021 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 3541 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 12–ը, իսկ գյուտի 687 կարճաժամկետ արտոնագրերից գործում են 163-ը:

ԳՐԱՖԻԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐՎԱ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ (2017-2021)



	2017	2018	2019	2020	2021
Գյուտի արտոնագիր	209	209	219	189	12
Գյուտի կարճաժամկետ արտոնագիր					163
Օգտակար մոդելի արտոնագիր	126	128	126	109	
Ընդամենը	335	337	345	298	175

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 5475 Եվրասիական արտոնագրեր

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ

ՀԱՅՏԵՐ

2021 թվականին ավելացել է Գրասենյակ ներկայացված արդյունաբերական դիզայնի հայտերի քանակը: Ազգային ընթացակարգով ստացվել է 37 հայտ (2020 թվականին՝ 33 հայտ): Հայտերից 32-ը ստացվել են ազգային հայտատուներից, ինչը 5-ով ավել է նախորդ տարվա համեմատ (2020 թվականին՝ 27 հայտ), իսկ 5-ը՝ օտարերկրյա հայտատուներից (Արաբական Միացյալ Էմիրություններ, Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան և Ուկրաինա):

Արդյունաբերական դիզայնների միջազգային գրանցման մասին Հաագայի Համաձայնագրի Ժնևյան ակտի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական դիզայնների միջազգային գրանցման մասին 95 ծանուցում (306 տարբերակ), ինչը 23-ով պակաս է նախորդ տարվա համեմատ (2020 թվականին՝ 118 ծանուցում): Գրանցումները ներկայացվել են 18 երկրներից (Շվեյցարիա՝ 49, Ռուսաստանի Դաշնություն՝ 8, ԱՄՆ՝ 7, Գերմանիա՝ 4, Ֆրանսիա՝ 4 և այլն):

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 15 հայտ (2020 թվականին՝ 7 հայտ), ինչը կազմել է հայտերի ընդհանուր թվի 40,54%-ը:

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայտատու	Հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
Ֆիզիկական անձ	10	27,03%
Իրավաբանական անձ	27	72,97%
Ընդամենը	37	100%

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ

ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

2021 թվականի ընթացքում գրանցվել է 23 արդյունաբերական դիզայն, որոնց տրվել են արդյունաբերական դիզայնի արտոնագրեր, ընդ որում, օտարերկրյա հայտատուներին տրվել է 6 արդյունաբերական դիզայնի արտոնագիր (Արաբական Միացյալ Էմիրություններ, Ռուսաստանի Դաշնություն, Չինաստան, Կորեայի Հանրապետություն և Ֆրանսիա):

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

2021 թվականին աճել է Մտավոր սեփականության գրասենյակ ներկայացված ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը։

Ազգային ընթացակարգով գրանցման է ներկայացվել 2887 հայտ, ինչը մոտ 20%-ով ավել է նախորդ տարվա համեմատ (2020 թվականին՝ 2418 հայտ)։ Հայտերից 2364-ը ներկայացվել է ազգային հայտատուների կողմից։ Ապրանքային նշանների թվով 2815 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, գրանցվել է 2068 ապրանքային նշան, որոնցից 1801-ը՝ ազգային հայտատուների անունով։ Նախորդ տարվա համեմատ գրանցված ապրանքային նշանների քանակն աճել է ընդամենը 12%-ով (2020 թվականին՝ 1868 հայտ), 55%-ով աճել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումների թիվը (240 մերժում՝ նախորդ տարվա 156-ի փոխարեն), հետ կանչված է համարվել 42 հայտ։ 2021 թվականի ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 2068 ապրանքային նշանի վկայագիր։

Միջազգային ընթացակարգով (Մադրիդյան համակարգ) Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2765 ծանուցում (2020 թվականին՝ 2710 ծանուցում)։

Միջազգային ծանուցումներով կայացվել է ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ 1937 որոշում, նախնական մերժման մասին կայացվել է 821, իսկ վերջնական մերժման մասին՝ 1495 որոշում։

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ



ԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԵՐՎԱԾ Է ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Երկիրը		Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
AM	Հայաստան	2364		2364
AG	Անտիգուա և Բարբուդա	1	2	3
AE	Արաբական Միացյալ Էմիր.	10	5	15
AT	Ավստրիա	4	16	20
AU	Ավստրալիա	7	12	19
BA	Բոսնիա և Հերցեգովինա	2		2
BE	Բելգիա		36	36
BG	Բուլղարիա		23	23
BR	Բրազիլիա		4	4
BS	Բահամյան Կղզիների Ընկերակցություն		1	1

BY	Բելառուս		48	48
BZ	Բելիզ	4	5	9
CA	Կանադա		25	25
CH	Շվեյցարական Համադաշնություն	69	172	241
CN	Չինաստան	29	294	323
CU	Կուբա	2		2
CY	Կիպրոս	3	49	52
CZ	Չեխիայի Հանրապետություն	1	5	6
DE	Գերմանիա	17	221	238
DK	Դանիա	4	13	17
EE	Էստոնիա		6	6
EG	Եգիպտոս		1	1
ES	Իսպանիա	1	45	46
FI	Ֆինլանդիա	4	8	12
FR	Ֆրանսիա	8	70	78
GB	Միացյալ Թագավորություն	9	66	75
GE	Վրաստան	10	11	21
GR	Հունաստան	2	2	4
HR	Խորվաթիա	4	3	7
HU	Հունգարիա		132	132
ID	Ինդոնեզիա		3	3
IE	Իռլանդիա	4	18	22
IL	Իսրայել		7	7
IN	Հնդկաստան	3	21	24
IR	Իրան	3	11	14
IS	Իսլանդիա		1	1
IT	Իտալիա	3	153	156
JO	Հորդանան	3		3
JP	Ճապոնիա	26	48	74
KE	Քենիա		1	1
KN	Սենտ Քիթս և Նևիս Դաշնություն		1	1

KR	Կորեայի Հանրապետություն	35	75	110
KZ	Ղազախստան	1	20	21
LB	Լիբանան	5	1	6
LI	Լիխտենշտեյն		12	12
LV	Լատվիա		10	10
LT	Լիտվա		3	3
LU	Լյուքսեմբուրգ	1	11	12
MC	Մոնակո		1	1
MD	Մոլդովայի Հանրապետություն		4	4
MK	Մակեդոնիա	21		21
MT	Մալթա		9	9
MY	Մալայզիա		1	1
NL	Նիդերլանդներ	1	25	26
NO	Նորվեգիա		5	5
OM	Օման		7	7
PL	Լեհաստան	3	34	37
RO	Ռումինիա		5	5
PT	Պորտուգալիա		2	2
QA	Քաթար		1	1
RU	Ռուսաստանի Դաշնություն	47	567	614
SC	Սեյշելյան կղզիներ	1	1	2
SE	Շվեդիա	5	15	20
SG	Սինգապուր	4	27	31
SI	Սլովենիա		11	11
SK	Սլովակիա		1	1
SM	Սան Մարինո		1	1
SY	Սիրիայի Արաբական Հանրապետություն		5	5
TH	Թայլանդ	1		1
TR	Թուրքիա	3	53	56
VC	Սենթ Վինսենթ և Գրենադիններ		1	1

VN	Վիետնամ		9	9
VG	Վիրջինյան կղզիներ	1	2	3
UA	Ուկրաինա	2	65	67
UZ	Ուզբեկստան	1	1	2
USA	ԱՄՆ	148	239	387
Others (MU, BD, FL, JE, HK, BM, MH)		10	2	12
Ընդամենը		**2887**	**2765**	**5652**

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 33 հայտ:

2021 թվականին **առաջատար դիրքում** են ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգչի (ԱԾՄԴ) 35-րդ դասի (գովազդ. գործարարության կառավարում, կազմակերպում, վարչարարություն. գրասենյակային ծառայություններ) ծառայությունների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները, որոնց թիվը կազմում է 517 հայտ (2020 թվականին՝ 381 հայտ) **երկրորդ տեղում** են ԱԾՄԴ-ի 33-րդ դասի (ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի)) ապրանքների համար գրանցման ներկայացված ապրանքային նշանները, որոնց թիվը կազմում է 502 հայտ (2020 թվականին՝ 478 հայտ), և **երրորդ տեղում** են ԱԾՄԴ-ի 30-րդ դասի (սուրճ, թեյ, կակաո և սուրճի փոխարինիչներ. բրինձ, մակարոնեղեն և լապշա (արիշտա). տապիոկա և սագո. ալյուր և հացահատիկային մթերքներ. հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք. շոկոլադ. պաղպաղակ, շարբաթ և այլ սննդային սառույցներ. շաքար, մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, համեմանք, ամոքանք, պահածոյացված խոտաբույսեր. քացախ, սոուսներ և այլ համեմունքներ. սառույց

(սառեցված ջուր)) ապրանքների համար գրանցման ներկայացվածները, որոնց թիվը կազմում է 338 հայտ (2019 թվականին՝ 217 հայտ):

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում 65%-ով աճել է նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի քանակը (1296 հայտ) նախորդ տարվա համեմատ (2020 թվականին՝ 775 հայտ):

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021 թվականի ընթացքում ներկայացվել է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ 99 գրավոր առարկություններ և դիտողություններ, ինչը 25%-ով պակաս է նախորդ տարվա համեմատ (2020 թվականին՝ 131 առարկություն):



ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է 700 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգման և արդյունաբերական դիզայնի գրանցումից բխող 25 դիմում իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգման մասին:

Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 720 փոփոխություն և այլ գործողություններ:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 150 ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու, 37 ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու, 2 ապրանքային նշանի ենթալիցենզիայի, 2 ապրանքային նշանի ենթալիցենզիայի փոփոխությունը գրանցելու, 14 ապրանքային նշանների լիցենզիաների փոփոխությունը գրանցելու, ապրանքային նշանների 3 լիցենզիաները չեղյալ հայտարարելու մասին, ապրանքային նշանի 1 ֆրանչայզինգի պայմանագրի, ինչպես նաև 1 արտոնագրի ոչ բացառիկ լիցենզիա տալու, 1 արտոնագրի իրավունքի փոխանցման, 1 արտոնագրի բացառիկ լիցենզիայի մասին դիմումներ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2021 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության Գրասենյակի բողոքարկման խորհուրդ ներկայացվել է 1 հանրահայտ ապրանքային նշանի վերաբերյալ դիմում, 26 ապրանքային նշանների և 1 գյուտի վերաբերյալ դիմում-բողոքներ: Ներկայացված բողոքներից և դիմումներից 17-ը բողոքարկման խորհուրդը բավարարել է, իսկ 11-ի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2021թ. ընթացքում Գրասենյակը 79 դատական գործով մասնակցել է 143 դատական նիստի:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

2021 թվականի մարտի 3-ին ընդունվել են «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքը և «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենքը, որոնք ուժի մեջ են մտել 2021 թվականի հուլիսի 1-ից:

2021 թվականին «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Կառավարություն:

2021 թվականին ներկայացվել է «Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ:

2021 թվականին ՀՀ Կառավարության քննարկմանն են ներկայացվել նոր օրենքներից բխող թվով 11 նոր ենթաօրենսդրական ակտերի նախագծեր:

2021 թվականին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է «Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» պայմանագիրը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրում 2023-2026թթ.-ի համար նախատեսվել են «Մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման» և «Ապրանքային նշանների մասին» օրենքում փոփոխությունների կատարման միջոցառումները:

Մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման աշխատանքները մեկնարկել են 2021թ.-ի նոյեմբերից: Այն մշակվում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) փորձագետների հետ համատեղ: Հիշյալ ռազմավարության ընդունումը Կառավարության կողմից նախատեսվում է 2022թ.-ի դեկտեմբերին:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2021 թվականին հրապարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 24 համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են 73 գյուտի, 23 արդյունաբերական դիզայնի, 2068 ապրանքային նշանի մասին պաշտոնական տեղեկություններ, ընդգրկվել են նաև ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին տեղեկություններ:

2021 թվականին հրապարակվել է «Ապրանքային նշանների հայտեր» տեղեկագրի 24 համար: Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական դիզայնների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին և գրադարաններին փոխանցելու համար, Գրասենյակի համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինչպես նաև համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2020 թվականի «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Պատրաստվել և Գրասենյակի պաշտոնական կայքում են տեղադրվել տեղեկագրի էլեկտրոնային ձևերը:

2021 թվականին էլեկտրոնային եղանակով Գրասենյակ է ներկայացվել 1296 ապրանքային նշանի հայտ (2020 թվականին՝ 775), 32 գյուտի (2020 թվականին՝ 6) և 16 արդյունաբերական դիզայնի հայտ (2020 թվականին՝ 10):

Ոչ թղթային տեխնոլոգիաներին անցնելու նպատակով ձեռնարկվել են մի շարք քայլեր. թվայնացվել են մոտ 2068 ապրանքային նշանի, 73 գյուտի, 23

արդյունաբերական դիզայնի փաստաթղթերը: Թվայնացման աշխատանքները շարունակվում են նաև 2022 թվականին:

2021 թվականի ընթացքում շարունակվել են հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի արդիականացման աշխատանքները, ներդրվել է Մտավոր սեփականության գրասենյակի նոր կայքէջը (**aipo.am** նոր հասցեով):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գրասենյակը շարունակել և ավելի ամրապնդել է համագործակցությունը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների հետ: Համագործակցության հիմնական կարևոր ուղղությունը 2021 թվականին Գրասենյակի մասնագետների առցանց մասնակցությունն էր տարբեր միջոցառումներին՝ համաժողովներին, սեմինարներին, կլոր սեղաններին, գործնական հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվել են մտավոր սեփականության բնագավառի զարգացման ուղիները, ինչպես նաև ոլորտի մասնագետների վերապատրաստման առցանց դասընթացներին:

2021 թվականի մարտի 16-18-ը անցկացվել է ԵԱԱԳ կողմից կազմակերպված հեռավար դասընթաց «Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառի գյուտերի փորձաքննության՝ ԵԱԱԳ և արդյունաբերական սեփականության այլ գերատեսչությունների մոտեցումները» թեմայով, որին մասնակցել է Գրասենյակի աշխատակից:

2021 թվականի ապրիլի 22-ին Գրասենյակի ներկայացուցիչը մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) և «Յանդեքս» ընկերության աջակցությամբ մտավոր սեփականության դաշնային ծառայության (Ռոսպատենտ) կողմից կազմակերպված հեռավար կոնֆերանսին, որի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները՝ արհեստական բանականության իրավական անհատականությունն ու պատասխանատվությունը, նորմատիվ կարգավորման հարմարեցումը և արհեստական բանականության համակարգերի կողմից կամ դրանց

մասնակցությամբ ստեղծված մտավոր սեփականության օբյեկտների պահպանության հատուկ ռեժիմի ներդրման նպատակահարմարությունը:

2021 թվականի հունիսի 9-ին Գրասենյակի ներկայացուցիչները մասնակցել են «Կոնյակ» աշխարհագրական նշման վերաբերենդավորման գործընթացի շրջանակներում «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում կայացած աշխատաժողովին: Միջոցառմանը մասնակցում էին գործընթացում ներգրավված Եվրամիության փորձագետները և մասնավոր հատվածը:

2021 թվականի հունիսի 15-18-ը ընկած ժամանակահատվածում «TAIEX» ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել «Աշխարհագրական նշումների խթանումը» խորագրով աշխատաժողովը Գրասենյակի ներկայացուցիչների մասնակցությամբ:

2021 թվականի հունիսի 17-18-ը Գրասենյակի մասնագետները մասնակցել են «Արդյունաբերական նմուշների փորձագետների լավագույն փորձի փոխանակում» խորագրով վեբինարին, որը կազմակերպվել էր Եվրոպական մտավոր սեփականության գերատեսչության (EUIPO) և Եվրասիական արտոնագրային կազմակերպության (EAPO/ЕАПВ) անդամ

երկրների ազգային արտոնագրային գերատեսչությունների փորձագետների համար:

2021 թվականի հունիսի 22-ին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարի պաշտոնակատարը մտավոր սեփականության այլ գրասենյակների ղեկավարների հետ միասին մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) գլխավոր տնօրեն Դարեն Թանգի հրավերով կազմակերպված տեսաժողովին: Առցանց հանդիպման ընթացքում Դարեն Թանգը ներկայացրել է ՄՍՀԿ նոր՝ 2022-2026 միջնաժամկետ ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև 2022-2023 թվականների համար առաջարկվող ծրագրերը և կազմակերպության բյուջեն:

2021 թվականի հունիսի 23-24-ը տեսակոնֆերանսի ձևաչափով տեղի է ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Ղրղզստանի մտավոր սեփականության և նորարարության պետական գործակալության կողմից կազմակերպված տարածաշրջանային սեմինար «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարման առավելությունները ժամանակակից աշխարհում» խորագրով: Սեմինարին մասնակցել են Գրասենյակի հեղինակային իրավունքի բաժնի մասնագետները:

2021 թվականի հուլիսի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանում տեղի է ունեցել աշխատաժողով՝ «Հեղինակային իրավունք: Բացառություններ և սահմանափակումներ գրադարանային և հրատարակչական ոլորտներում» թեմայով, որին մասնակցել է Գրասենյակի ղեկավարի պաշտոնակատարը:

2021 թվականի հունիսի 30-ին Մտավոր սեփականության գրասենյակի մասնագետները մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բիզնեսի զարգացման վարչության կողմից կազմակերպված տեսակոնֆերանսին,

որտեղ քննարկվել են ծառայությունների ստեղծման հետ կապված խնդիրները, որոնց կիրառմամբ հնարավորություն կընձեռվի մոտ ապագայում առցանց որոնում իրականացնել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում իրավական պահպանություն ստացած արդյունաբերական սեփականության օբյեկտների հիմնապաշարներում:

2021 թվականի օգոստոսի 9-10-ը Մոսկվա քաղաքում (Ռուսաստանի Դաշնություն) տեղի ունեցավ Եվրասիական արտոնագրային կազմակերպության

(ԵԱԱԿ) վարչական խորհրդի 38-րդ (11-րդ արտահերթ) նիստը: Վարչական խորհրդի նիստին մասնակցել են վարչական խորհրդում ԵԱԱԿ անդամ երկրների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Թուրքմենստանի և Ադրբեջանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչները: Նիստի շրջանակներում տեղի ունեցավ Եվրասիական արտոնագրային գերատեսչության նախագահի ընտրությունները:

2021 թվականի օգոստոսի 26-ին Գրասենյակի աշխատակցի մասնակցությամբ կայացել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության աշխարհագրական նշումների վերաբերյալ սեմինար:

2021 թվականի օգոստոսի 26-28-ը հիբրիդային ձևաչափով անցկացվել է «Անտիկոնտրաֆակտ-2021» 9-րդ միջազգային համաժողովը «Գլոբալ մարտահրավերները և մտավոր սեփականության պաշտպանությունը նոր

իրականության մեջ» թեմայով, որին մասնակցել են Գրասենյակի աշխատակիցները:

2021 թվականի օգոստոսի 30-ից սեպտեմբերի 3-ը առցանց ձևաչափով տեղի է ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Ավանդական գիտելիքների կոմիտեի նիստը, որին մասնակցել է Գրասենյակի ներկայացուցիչը:

2021 թվականի սեպտեմբերի 14-ին հիբրիդային ձևաչափով տեղի է ունեցել ԱՊՀ Մտավոր սեփականության պահպանության և պաշտպանության հարցերով միջպետական խորհրդի 11-րդ հերթական նիստը:

Խորհրդում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Քրիստինե Համբարյանը մասնակցել է հանդիպմանը և հանդես է եկել զեկույցով՝ ներկայացնելով տարվա ընթացքում մտավոր սեփականության ոլորտում կատարված աշխատանքները և բարեփոխումները:

2021 թվականի սեպտեմբերի 15-ին Քիշնև քաղաքում հիբրիդային ձևաչափով անցկացվել է Մոլդովայի Հանրապետության մտավոր սեփականության պետական գործակալության (AGEPI) կողմից կազմակերպված «Արտոնագրային համակարգի դերը հանրային առողջության խնդիրների լուծման գործում» տարածաշրջանային սեմինար, որին մասնակցել են Գրասենյակի աշխատակիցները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի սեպտեմբերի 16-ին Գրասենյակի ներկայացուցիչները մասնակցել են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) կողմից Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) հետ համատեղ առցանց կազմակերպված Արտոնագրային համագործակցության համաձայնագրի (PCT) վերաբերյալ վեբինարին:

2021 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի է ունեցել Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության և Առևտրի համաշխարհային կազմակերպության կազմակերպած աշխատաժողովը՝ նվիրված COVID-19 համավարակի հետևանքով առաջացած նոր տեխնոլոգիաների, լիցենզիաների տրամադրման, գյուտերի առևտրայնացման և կլինիկական հետազոտությունների մեթոդներին, որին մասնակցել է Գրասենյակի աշխատակիցը:

2021 թվականի սեպտեմբերի 28-ին տեղի է ունեցել «WIPO Blockchain Whitepaper for IP Ecosystems» տեսակոնֆերանս Գրասենյակի աշխատակցի մասնակցությամբ:

2021 թվականի հոկտեմբերի 4-8-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում կայացել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության անդամ երկրների Ասամբլեաների 62-րդ նստաշրջանը, որի շրջանակներում տեղի են ունեցել Մադրիդի միության (Madrid Union) և Արտոնագրային համագործակցության համաձայնագրի (Patent Cooperation Treaty) ամենամյա նստաշրջանները: Գրասենյակի ղեկավարի պաշտոնակատարը հանդես է եկել ելույթով Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության

բնագավառում մեկ տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաև ՄՄՀԿ-ի հետ համատեղ իրականացվող ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ՝ հաստատելով դրանց կարևորությունը Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ոլորտի զարգացման համար: Ելույթում անդրադարձ է եղել նաև 2022 թվականին ՄՄՀԿ աջակցությամբ և ՄՄՀԿ-ի հետ համատեղ իրականացվելիք միջոցառումների կարևորությանը: Տեղի են ունեցել հանդիպումներ ՄՄՀԿ պատասխանատու ներկայացուցիչների, օտարերկրյա պետությունների մտավոր սեփականության գերատեսչությունների ղեկավարների հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության խորացման վերաբերյալ հարցեր:

2021 թվականի նոյեմբերի 15-18-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում տեղի է ունեցել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄԱՀԿ) կողմից կազմակերպված Նշանների միջազգային գրանցման Մադրիդյան համակարգի իրավական զարգացման աշխատանքային խմբի 19-րդ նստաշրջանը: Նստաշրջանին մասնակցել է Գրասենյակի ներկայացուցիչը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի նոյեմբերի 17-ին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գրասենյակի (ԵԱԳ) և Մտավոր սեփականության եվրոպական միության գրասենյակի (ՄՄԵՄԳ) աջակցությամբ տեղի է ունեցել Մոլդովայի Հանրապետության մտավոր սեփականության պետական գործակալության (AGEPI) կողմից կազմակերպված «Արհեստական բանականություն, նորարարություն և մտավոր սեփականություն» խորագրով միջազգային ինովացիոն կոնֆերանս հեռավար ձևաչափով, որին մասնակցել են Գրասենյակի փորձագետները:



2021 թվականի նոյեմբերի 17-ին Գրասենյակի աշխատակիցը մասնակցել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության վեբինարին՝ «Հեղինակային իրավունքի ենթակառուցվածքի եվրոպական հեռանկար» թեմայով:

2021 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Կիև քաղաքում տեղի է ունեցել Եվրոպական Միության մտավոր սեփականության գրասենյակի (այսուհետ՝ ԵՄՄՍԳ) կողմից կազմակերպված ՄՍ գործիքներին, կիրառություններին և պրակտիկային վերաբերող սեմինար, որին մասնակցել են Գրասենյակի աշխատակիցները:

2021 թվականի դեկտեմբերի 6-7-ը Գրասենյակի աշխատակիցը մասնակցել է մտավոր սեփականության ազգային գրասենյակների նշանների միջազգային գրանցման Մադրիդյան համակարգի ընթացակարգերի և գործառնությունների վերաբերյալ առցանց ուսուցման սեմինարին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի ընթացքում Գրասենյակի ներկայացուցիչների մասնակցությամբ տեսաժողովի ձևաչափով տեղի են ունեցել «Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում Ինտերնետում մտավոր սեփականության իրավունքների խախտումների դեմ պայքարի հիմնական մոտեցումների մասին» համաձայնագրի նախագիծի քննարկման աշխատանքային խմբի ամենամսյա հանդիպումները:

2021 թվականին ամենամսյա ռեժիմով, տեսակապի միջոցով, տեղի են ունեցել քննարկումներ EU4Digital - ՏՀՏ ոլորտում նորարարություններ ծրագրի շրջանակներում քննարկումներ Գրասենյակի աշխատակցի մասնակցությամբ: